



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ,
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ

2016-17 ուս. տարի

ԵՐԵՎԱՆ 2017

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2016-17 ուս. տարի

2016-17 ուս. տարում ԿԲՌՊՆՏ բաժնի աշխատանքները կազմակերպվել են ուսումնամեթոդական կենտրոնի կողմից մշակված աշխատանքային պլանին համապատասխան: Բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- համալսարանի գործունեության վարկանիշավորման ցուցանիշների հավաքագրում և մշակում,
- հարցումների կազմակերպում 1-ին կուրսի ուսանողների և շրջանավարտների շրջանում,
- հարցումների արդյունքների մուտքագրում, մշակում և վերլուծություն SPSS միջավայրում,
- ընթացիկ փաստաթղթային բազայի մշակում,
- որակի գնահատման գործիքների վերանայում և վերամշակում,
- «Ժամանակակից ուսուցման մեթոդներ» թեմայով սեմինարների կազմակերպում,
- համալսարանի կայքի «Որակի ապահովում» բաժնի թարմացում տեղեկատվական նյութերով,
- կառուցվածքային ստորաբաժանումներից համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հավաքագրում, մշակում, հաշվետվության կազմում,
- համալսարանի ամբիոնների կողմից առարկայական ծրագրերի մշակման համար խորհրդատվության տրամադրում,
- Տեմպուս Արմենիա ծրագրի շրջանակներում ՄԿԾ-երի և դասընթացների ծրագրերի մշակմանը ուղղված աշխատաժողովների իրականացում,
- համալսարանի լիցենզավորման գործընթացի իրականացում,
- համալսարանի բարելավման պլանի կատարողականի վերլուծություն և ներկայացում հաշվետվության տեսքով,
- ուսուցման մեթոդների ընտրության և կիրառման համար լավագույն փորձի ուսումնասիրում,
- մասնակցություն որակի ապահովման ոլորտի աշխատաժողովներին:

1. Վարկանիշավորման գործընթացի կազմակերպում և տվյալների հավաքագրում
2016 թ.-ի նոյեմբեր ամսին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստացված գրությանը համապատասխան բաժնի կողմից իրականացվել է համալսարանի վարկանիշավորման ցուցանիշների հավաքագրում և համակարգում կառուցվածքային ստորաբաժանումներից:

Վարկանիշավորումը ներառում է համալսարանի գործունեության 99 ցուցանիշ, որոնք արտացոլում են համալսարանի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների գործունեությունը:

Հավաքագրվել և հավելվածների տեսքով ներկայացվել են համալսարանի արտաքին կապերի դեպարտամենտի գործունեությանը վերաբերող ցուցանիշներ, պրոֆեսորա-դասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությանը վերաբերող տվյալներ (գիտական հրապարակումներ և այլն), գրադարանային ֆոնդերի մասին տվյալներ:

2. Որակի ապահովման քաղաքականության արդիականության վերլուծություն
2012 թ.-ին համալսարանի կողմից մշակվել է Որակի ապահովման քաղաքականությունը, որը 2016 թ.-ին վերանայվել և վերափոխվել է:

ՀԱԱՀ Որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել համալսարանի ուսումնական, գիտահետազոտական և կառավարման գործընթացների որակը և արդյունավետությունը:

Վերջին 5 տարվա ընթացքում իրականացվել են որակի ապահովման հետևյալ խնդիրները՝

- ձևավորվել և աշխատում է որակի ներքին ապահովման համակարգը,
- իրականացվում է որակի ապահովման ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրություն,
- կազմակերպվել և իրականացվել է ՄԿԾ-երի գնահատում և վերանայում, բովանդակության կատարելագործում՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների վրա,
- պարբերաբար իրականացվում է ուսումնառողների և դասավանդող կազմի շարժունության ապահովում արտերկրյա համալսարաններ՝ ուսուցանելու կամ վերապատրաստվելու նպատակով,
- պարբերաբար իրականացվում է դասավանդման և դասախոսական կազմի մասնագիտական որակների մշտադիտարկում և գնահատում,
- իրականացվում է համալսարանի շահակից կողմերի կարիքների մշտադիտարկում, կրթական գործունեության մշտադիտարկում և գնահատում,
- Համալսարանի կողմից հաստատված չափորոշիչների հիման վրա ուսանողների գիտելիքների գնահատում,
- իրականացվում է դասախոսական կազմի որակավորման բարձրացում՝ վերապատրաստումների միջոցով,
- իրականացվում է համալսարանի նյութատեխնիկական բազայի վերազինում համակարգչային տեխնիկայով, նոր բացվող մասնագիտական լաբորատորիաներով,

- նոր կրթական տեխնոլոգիաների ներդրում,
- Համալսարանում ինֆորմացիոն հոսքերի ավտոմատ կառավարման համար ինֆորմացիոն համակարգերի մշակում և ներդրում,
- հասարակությանը կանոնավոր տեղեկատվության տրամադրում համալսարանի կայքի միջոցով,
- համալսարանի գործունեության վերաբերյալ թափանցիկության և հաշվետվողականության ապահովում,
- համալսարանի շահակիցների հետ պարբերաբար հետադարձ կապի ապահովում:

Որակի ապահովման քաղաքականության հիման վրա համալսարանի կողմից 4 տարիների ընթացքում մշակվել, հաստատվել և գործածության մեջ են դրվել որակի ոլորտին վերաբերող քաղաքականություններ և ընթացակարգեր ըստ հետևյալ ուղղությունների՝

- ռազմավարական պլանավորում և կառավարում,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակում, մշտադիտարկում, գնահատում, վերանայում,
- կադրերի ընդունում և կառավարում,
- ուսանողների ընդունելություն և աջակցություն,
- արտաքին կապեր և միջազգայնացում,
- տեղեկատվության և հրապարակայնության ապահովում,
- որակի ներքին համակարգի ապահովում:

Բոլոր մշակված փաստաթղթերը համակարգվել են և ներկայացվել մեկ միասնական փաթեթի տեսքով:

Թույլ կողմեր:

- Պետք է նշել, որ թույլ է արձագանքը գործատուներից՝ համալսարանի շրջանավարտների պատրաստվածության մակարդակից բավարարվածության մասին: Հետազոտական ոլորտի նորարարությունների արդյունքների ուսումնական գործընթացում ներդրման աշխատանքներ չեն իրականացվում (*գիտահետազոտական գործունեություն - ուսումնական գործընթաց* կապի բացակայություն):
- Թույլ է ուսանողների շրջանում այս կամ այն գիտակրթական կառույցի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աստիճանը:

3. Հարցումների կազմակերպում և անցկացում

3.1.Բակալավրի 1-ին կուրսեցիների շրջանում հարցման կազմակերպում

ՀԱԱՀ Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի տարեկան պլանի համաձայն 2017 թ.-ի փետրվար-մարտ ամիսներին, ՀԱԱՀ ռեկտորի կողմից տրված հրամանի համաձայն իրականացվել է համալսարանի բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողների շրջանում հարցում:

- Հարցման նպատակն էր՝**
1. բացահայտել ուսանողների կարիքները,
 2. բացահայտել ուսանողների տեղեկացվածության մակարդակը,

3. գնահատել և վերլուծել ուսանողների կարիքները:

Հարցմանը մասնակցել են ՀԱԱՀ յոթ ֆակուլտետներից 1-ին կուրսի շուրջ 435 ուսանող, որոնցից 303-ը արական, 132-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ:

Հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

- որպես տեղեկատվության աղբյուր հիմնականում ուսանողները նշում են ծնողներին, համալսարանում սովորող ուսանողներին, համալսարանի ներկայացուցիչներին:
- *մասնագիտությունների, ընդունելության և ուսուցման պայմանների վերաբերյալ* 1-ին կուրսեցիները, որպես դիմորդ, հիմնականում տեղեկացել են համալսարանի կայք էջից,
- փաստաթղթերի ընդունման գործընթացը հիմնականում գնահատել են գերազանց և լավ,
- 1-ին կուրսեցիների մեծ մասը (400 ուսանող) առաջին հայտով նշել են ՀԱԱՀ-ը,
- հարցվածների մեծ մասը ընտրել է ՀԱԱՀ-ը, քանի որ նրանց դուր են գալիս գյուղատնտեսական ոլորտի մասնագիտությունները:

3.2.Շրջանավարտների շրջանում հարցման կազմակերպում

2017 թ.-ի մարտ-մայիս ամիսներին իրականացվել է հարցում համալսարանի շրջանավարտների շրջանում:

Անկետավորման գործընթացին մասնակցել են շուրջ 431 շրջանավարտ, որոնցից 215-ը արական սեռի ներկայացուցիչներ էին, 216-ը՝ իգական:

Հարցման **նպատակն էր** բացահայտել և գնահատել համալսարանի շրջանավարտների բավարարվածության մակարդակը կրթության որակից:

Հարցման արդյունքները մշակվել են SPSS ծրագրով, իրականացվել է վերլուծություն: Արդյունքները ներկայացվել են հաշվետվության տեսքով:

Հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

Շրջանավարտները ավելի շուտ բավարարված չեն.

- դասախոսական և լաբորատոր լսարանների նյութատեխնիկական հագեցվածությունից,
- սանհանգույցների սանիտարահիգիենիկ պայմաններից, մարզադահլիճների, հանրակացարանի ընդհանուր վիճակից և պայմաններից,
- ուսանողների գիտելիքների գնահատման համակարգից,
- առարկաների ուսուցման մեջ գործնական մասի քիչ լինելուց:

Շահակիցների շրջանում անցկացված հարցումների արդյունքները վերլուծվել և ներկայացվել են «Սոցիալական հարցման արդյունքների հաշվետվության» մեջ:

4. Ընթացիկ փաստաթղթերի մշակում և տրամադրում կառուցվածքային ստորաբաժանումներին

2016/17 ուս. տարում 7 ֆակուլտետների մասնագիտական ամբիոններից հավաքագրվել և ամփոփ փաստաթղթի տեսքով ներկայացվել է ամբիոնների ռեսուրսային բազան:

Մշակվել են հետևյալ փաստաթղթերի նախագծային տարբերակները՝

- ՀԱԱՀ կառավարման և վարչարարության քաղաքականություն և ընթացակարգ,
- Սկսնակ դասախոսների ինամակալության (մենթորության) քաղաքականություն և կարգ:

Փաստաթղթերը ներկայացվել են քննարկման և առաջարկությունների ներկայացման:

Վերանայվել և վերամշակվել են որակի ապահովման գործընթացներն ապահովող գնահատման թերթիկները (ուսանողներ, դաս, շրջանավարտների հարցման թերթիկներ):

Վերջին 5 տարվա ընթացքում մշակված և հաստատված որակի ապահովման գործընթացը ձևավորող փաստաթղթերը միավորվել են ըստ ոլորտների, որի արդյունքում ձևավորվել է որակի ապահովման փաստաթղթային փաթեթը:

5. Սեմինարների կազմակերպում և իրականացում

2016/17 ուս. տարում Համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում իրականացվել են սեմինարներ «Ժամանակակից ուսուցման մեթոդներ» թեմայի շրջանակներում:

Սեմինարների նպատակն էր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին ծանոթացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին՝ որպես ուսուցման կազմակերպման արդյունավետ միջոց և որակի ապահովման գործիք:

Սեմինարները անցկացվել են ազրոնոմիական և հողաշինարարության ֆակուլտետների շուրջ 5 ամբիոններում:

Սեմինարին ներկայացվել են պասիվ և ակտիվ ուսուցման առանձնահատկությունները, տարբերությունները, թերությունները և առավելությունները:

Առանձնացվել են ինտերակտիվ ուսուցման մեթոդները՝ որպես արդյունավետ ուսուցման ժամանակակից մեթոդներ:

Իրականացվել է սեմինարների անցկացման արդյունավետության գնահատում՝ նախապես մշակված գնահատման հարցաթերթիկի միջոցով:

6. Համալսարանի կայքի «Որակի ապահովում» բաժնի թարմացում

2017 թ.-ի մարտ ամսին իրականացվել է համալսարանի կայք էջի «Որակի ապահովում» բաժնի ընթացիկ թարմացում որակի ապահովմանը ուղղված փաստաթղթերով, ավելացվել են նոր բաժիններ, ակտիվացվել է բաժնի էջի համար այցելությունները ֆիքսող Google Analytic համակարգը:

Որակի ապահովման համակարգ
Համալսարանի շահակիցներ
Որակի ապահովման գործընթացներ
Նորմատիվային փաստաթղթեր
Որակի ապահովման ազգային կենտրոն
Կրթական բարեփոխումների բաժին
Հավատարմագրում
Հաշվետվություններ
Աշխատաժողովներ
Ինքնավերլուծություն
Ընթացիկ գործընթացներ
Հետադարձ կապ

7. Համալսարանի ԳԱՑ-երի հավաքագրում և վերլուծություն

Համալսարանում յուրաքանչյուր ուս. տարի ԿԲՌՊՆՏ բաժնի կողմից իրականացվում է համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշների հավաքագրում և վերլուծություն:

2016-17 ուս. տարում վերլուծվել են համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշներն ըստ հետևյալ ուղղությունների հինգ տարվա կտրվածքով՝

- ընդունելություն և ուսանողական համակազմ,
- ուսումնական գործընթաց,
- ռեսուրսներ և կառավարում,
- ենթակառուցվածք,
- գիտություն և ինովացիա,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Յուրաքանչյուր ցուցանիշի կամ ցուցիչի համար կառուցված է գնահատման դիագրամ և տրված է որակական գնահատական: Արդյունքները ներկայացվել են հաշվետվության տեսքով:

8. Առարկայական ծրագրերի մշակման համար խորհրդատվության տրամադրում

Համալսարանում 2016 թ.-ից իրականացվում է ՄԿԾ-երի և դրանց տարրերի վերանայում և վերամշակում՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների վրա:

Վերանայման գործընթացին մասնակցել են ազրոպարենային ոլորտի ճյուղային մասնագետները, գործատուները՝ տալով իրենց կարծիքը այս կամ այն կրթական ծրագրի մեջ փոփոխություններ կատարելու համար:

ԿԲՌՊՆՏ բաժինը ամբիոններին խորհրդատվություն է տրամադրել առարկայական ծրագրերի մշակման համար՝ առարկայական ծրագրերի մշակման ուղեցույցին համապատասխան: Տրամադրվել են լրացուցիչ նյութեր ծրագրերի պատշաճ մակարդակով մշակման համար:

9. ՄԿԾ-երի և դասընթացների ծրագրերի մշակմանը ուղղված աշխատաժողովների իրականացում

2016 թ.-ի նոյեմբերի 24-25-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կազմակերպվել և իրականացվել է դասախոսական կազմի վերապատրաստմանը նվիրված աշխատաժողով, որի աշխատանքներին մասնակցում էր Գերմանիայի Օսնաբրուկի կիրառական գիտությունների համալսարանի դոկտոր Dieter Trautz-ը: Աշխատաժողովի աշխատանքները համակարգել է ՀԱԱՀ պրոռեկտոր Սմբատ Դավեյանը: Զեկուցումներով հանդես են եկել «ԱՐՄԵՆՔԱ» նախագծի անդամներ Սմբատ Դավեյանը, Անդրեաս Մելիքյանը, Գայանե Ավագյանը, Գարեգին Համբարձումյանը և Սուրեն Կոսեմյանը:

Դասախոսական կազմին ներկայացվել է ՀՀ ԲԿ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակները, դրանց համադրումը:

ՈՈՇ-ի բովանդակության և ՈԱՇ-ին համապատասխանության վերաբերյալ տեղի են ունեցել բուռն քննարկումներ, որի արդյունքում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հանդես են եկել իրենց դիտողություններով և առաջարկություններով, որոնք հաշվի են առնվելու «Արմենքա» նախագծի անդամների կողմից՝ ՈՈՇ-ի վերջնական ձևակերպման ժամանակ:

Աշխատաժողովի շրջանակներում ներկայացվել են դասընթացների համար կրթական վերջնարդյունքների ձևակերպման վրա դրվող պահանջները և սկզբունքները, ՄԿԾ-ի նպատակի և կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնախնդիրները և այլ առանցքային հարցեր:

«Ծրագրի բովանդակությունը, դասավանդման և ուսումնառության մեթոդները, ԿՓԵՀ» թեմայի շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ընտրվել են ԿՎ-ների համապատասխան արդյունավետ դասավանդման և ուսումնառության ձևերը ու մեթոդները:

«Ուսանողների գնահատումը սահմանված չափանիշների օգնությամբ» թեմայով զեկուցման ընթացքում ունկընդիրներին ներկայացվել են արդյունավետ գնահատման սկզբունքները, ձևակերպվեցին գնահատման չափանիշներ՝ տրված ԿՎ-ների համար, բացատրվել են ԿՎ-ներին համարժեք գնահատման ձևերն և մեթոդները, սահմանվել են գնահատման չափորոշիչներ, որոնք կնպաստեն ուսանողների գիտելիքների և կարողությունների արժանահավատ գնահատմանը:

Աշխատաժողովի ընթացքում կազմակերպվել են գործնական պարապմունքներ մասնագիտությունների կրթական ծրագրերի և դասընթացների համար կրթական վերջնարդյունքների ձևակերպման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ճիշտ ընտրության թեմաների շրջանակներում:

Ելույթով հանդես է եկել նաև Dieter Trautz-ը, որը բարձր է գնահատել աշխատաժողովը ինչպես կազմակերպչական, դասախոսական կազմի ընդգրկվածության ու ակտիվ մասնակցության, այնպես էլ բովանդակային առումով:

Արդյունքում վերապատրաստվել են շուրջ 60 դասավանդող, ծրագրերի պատասխանատուներ և վարչական աշխատողներ:

10. Համալսարանի լիցենզավորման գործընթացի իրականացում

2015-16 ուս. տարվա ընթացքում աշխատանքներ են տարվել ՀԱԱՀ-ի բոլոր կրթական ծրագրերի վերալիցենզավորման ուղղությամբ:

ՀՀ ԿԳՆ լիցենզավորման վարչություն են ներկայացվել բակալավրի կրթական ծրագրերի իրականացման վերալիցենզավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Բոլոր մասնագիտությունների դասիչները փոխվել և համապատասխանեցվել են 2015 թ.-ի ՀՀ կառավարության և ՀՀ ԿԳՆ հաստատված ցանկի հետ:

2016 թ.-ի ապրիլի 6-ին վերալիցենզավորվել է և տրվել է լիցենզիան, ըստ որի համալսարանը իրավունք ունի կրթական գործունեություն ծավալելու բակալավրի կրթական ծրագրերով:

Լիցենզավորման վարչություն է ներկայացվել նաև մագիստրատուրայի կրթական ծրագրերի իրականացման վերալիցենզավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ ըստ հաստատված ցանկի փոփոխելով մասնագիտությունների դասիչները:



Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար նույնպես 2016 թ.-ի ապրիլի 6-ին տրվել է լիցենզիա, ըստ որի ՀԱԱՀ իրավունք ունի իրականացնելու մագիստրոսի կրթական ծրագրով ուսուցում համապատասխան մասնագիտություններով:



2016-2017 ուս. տարում աշխատանքներ են տարվել և 2017 թ-ի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ ԿԳՆ լիցենզավորման վարչություն է ներկայացվել նաև համալսարանի միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացման վերալիցենզավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Մասնագիտությունների դասիչները համապատասխանեցվել են 2015 թ.-ի ՀՀ կառավարության որոշման ցանկի հետ: Միջին մասնագիտական կրթական ծրագրի վերալիցենզավորման գործընթացը ընթացքի մեջ է:

11. Բարելավման պլանի կատարողականի վերլուծություն

2017 թ.-ին իրականացվել է 2014 թ.-ին համալսարանի կողմից մշակված բարելավման պլանի կատարողական վերլուծություն հետևյալ ուղղություններով՝

- Առաքելություն և նպատակներ,
- Կառավարում և վարչարարություն,
- Մասնագիտության կրթական ծրագրեր,
- Ուսանողներ,
- Պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմ,
- Հետազոտություն և զարգացում,
- Ենթակառուցվածք և ռեսուրսներ,
- Հասարակական պատասխանատվություն,
- Արտաքին կապեր և միջազգայնացում,
- Որակի ներքին ապահովման համակարգ:

Վերլուծության իրականացման համար կազմվել են աշխատանքային խմբեր ըստ ուղղությունների, գնահատվել է բարելավման պլանի կատարողականը ըստ պատասխանատուների և իրականացման ժամկետների:

Բարելավման պլանի կատարողականի վերլուծությունը ներկայացվել է հաշվետվության տեսքով և տրամադրվել է ՀՀ ՈԱԱԿ:

12. Մասնակցություն աշխատաժողովներին

Որակի ապահովման աշխատաժողով

2017թ.-ի փետրվարի 23-24-ին համալսարանի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված Որակի ապահովման շահակիցների 4-րդ համաժողովին՝ «Որակը լսարանում՝ գնահատման համակարգի բարելավում» թեմայի շրջանակներում:

Համաժողովի մասնակիցները ծանոթացել են Բաթ Սպա համալսարանի (Միացյալ Թագավորություն) և Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտի (Իռլանդիա) փորձին դասընթացի պլանավորման, ուսանողների գիտելիքների գնահատման ոլորտում:

Բարելավարքություն

2017 թ.-ի մայիսի 10-ից 11-ը համալսարանի աշխատակիցները «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարելավարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում մասնակցել են երկօրյա աշխատաժողովին, որտեղ ծանոթացել են տարբեր եվրոպական համալսարանների փորձին բարելավարքության և էթիկային վերաբերող հարցերի շուրջ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժինը 2016/17 ուս. տարում կատարված աշխատանքների և որակի ապահովման ոլորտի համար մշակված փաստաթղթային հենքի հիման վրա վեր է հանել հետևյալ խնդիրները՝

- անհրաժեշտ է որակի ոլորտին վերաբերող փաստաթղթային բազան (ըստ ուղղությունների) ամբողջությամբ ներդնել գործածության մեջ,
- անհրաժեշտ է ակտիվացնել *համալսարան-գործատու* կապը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման, գործատուների մոտ աշխատող շրջանավարտների մասնագիտական որակների գնահատման նպատակով,
- անհրաժեշտ է ստեղծել տեղեկատվության ապահովման միասնական համակարգ՝ ուսանողներին համալսարանի կրթական ծառայությունների մասին ամբողջական և բովանդակալից տեղեկատվություն տրամադրելու համար,
- անհրաժեշտ է ստեղծել համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-երի) հավաքագրման համար ծրագրային հավելված:

Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժինը վեր է հանել հաջորդ ուս. տարում նախատեսվող հետևյալ հիմնական խնդիրների լուծումը՝

- բացահայտել և գնահատել համալսարանի շահակիցների (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմ, շրջանավարտներ) կարիքները,
- պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում կազմակերպել սեմինարների շարք «Ժամանակակից ուսուցման մեթոդներ», «Ուսանողների գիտելիքի գնահատում» թեմաներով,
- մասնագիտությունների պատասխանատուների համար իրականացնել խորհրդատվություն մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման համար,
- որակի ապահովման գործընթացներում բարձրացնել համալսարանի դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության աստիճանը: